

ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով Հայաստանի և Ռուսաստանի միջև դաշնակցային հարաբերություններից և եղբայրական բարեկամությունից,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության վերաբերյալ» 1993 թվականի հունվարի 11-ի համաձայնագրով, «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» 1997 թվականի օգոստոսի 29-ի պայմանագրով,

նպատակ ունենալով Կողմերի պետությունների ժողովուրդների կրթության և մշակույթի զարգացման գործում հետագա փոխգործակցության համար ստեղծելու առավել բարենպաստ պայմաններ,

ելնելով 2003 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև 1997 թվականի օգոստոսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-Հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ» համաձայնագրով փոփոխված և լրացված՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-Հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին» 1997 թվականի օգոստոսի 29-ի համաձայնագրի (այսուհետ՝ Հիմնադիր համաձայնագիր) իրագործման կուտակված փորձից,

ընդունելով «Ռուս-Հայկական Համալսարան» (այսուհետ՝ Համալսարան) բարձրագույն կրթության կրթական կազմակերպության հետագա զարգացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Իրավական կարգավիճակը

Սույն Համաձայնագրով Կողմերն ամրագրում են Հիմնադիր համաձայնագրով ստեղծված Համալսարանի գործունեության պայմանները:

Համալսարանը բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն է, որը համատեղ կառավարվում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան՝ Համալսարանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական համալսարան և ունի հիմնադրամի կարգավիճակ:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համապատասխան՝ Համալսարանն օգտվում է Ռուսաստանի Դաշնությունում բարձրագույն կրթության դաշնային պետական կրթական կազմակերպության կարգավիճակից:

Համալսարանը իրավաբանական անձ է:

Համալսարանը գործում է Համալսարանի կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) հիման վրա, որը հաստատվում է սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված Կողմերի լիազորված մարմինների (այսուհետ՝ Լիազորված մարմիններ) կողմից:

Համալսարանի աշխատանքային լեզուներն են հայերենը և ռուսերենը:

Համալսարանում գործադարությունն իրականացվում է ռուսերենով, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում՝ հայերենով: Հայերենն օգտագործվում է Համալսարանի և Հայաստանի Հանրապետության պետական գերատեսչությունների ու կազմակերպությունների միջև նամակագրության համար:

Հոդված 2

Լիազորված մարմինները

Լիազորված մարմիններն են՝

- Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Հայկական Կողմից Լիազորված մարմին).

- Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության գիտության և բարձրագույն կրթության նախարարությունը (այսուհետ՝ Ռուսական Կողմից Լիազորված մարմին):

Լիազորված մարմնի անվան փոփոխության և (կամ) նրա գործառույթները պետական կառավարման մեկ այլ մարմնի (այլ մարմինների) փոխանցելու մասին Կողմը դիվանագիտական ուղիներով անհապաղ գրավոր ծանուցում է ուղարկում մյուս Կողմին:

Հոդված 3 **Համալսարանի խնդիրները**

Համալսարանի խնդիրներն են՝

- բարձր որակավորում ունեցող կադրերի, այդ թվում՝ գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստում Հայաստանի Հանրապետությունում հաստատված պետական կրթական չափորոշիչներին ու պահանջներին և Ռուսաստանի Դաշնությունում հաստատված դաշնային պետական կրթական չափորոշիչներին ու դաշնային պետական պահանջներին համապատասխան,

- կրթական, գիտական և նորարարական գործունեության իրականացում,

- հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների անցկացում Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և այլ պետությունների բարձրագույն կրթության կրթական կազմակերպությունների և գիտական կազմակերպությունների հետ համատեղ,

- գիտատեխնիկական նախագծերի իրականացում, այդ թվում՝ որպես պատվիրատու՝ գործարար համայնքի ներկայացուցիչների ներգրավմամբ,

- գիտության աջակցություն և ֆինանսավորում, յուրահատուկ կոմպետենցիաների զարգացում,

- անձի կրթական պահանջմունքների բավարարում, աջակցություն Կողմերի պետությունների ժողովուրդների մշակույթների, լեզուների, պատմական և ազգային ավանդույթների պահպանմանը, զարգացմանը և փոխհարստացմանը,

- լուսավորչական միջոցառումների անցկացում ռուսաց լեզվի և ռուսական մշակույթի հանրայնացման նպատակով,

- Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների հետ փոխգործակցության ընդլայնման ապահովում,

- ռուսաց լեզու դասավանդողների որակավորման բարձրացման կենտրոնի ստեղծում և զարգացում,

- ակադեմիական փոխանակումների և ստաժավորման ծրագրերի իրականացում Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և այլ պետությունների բարձրագույն կրթության կրթական կազմակերպություններում և գիտական կազմակերպություններում,

- ռուսաստանյան կրթության ցուցահանդեսների և տոնավաճառների անցկացում,

- Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության դերի և ազդեցության ուժեղացում համաշխարհային հումանիտար և գիտատեխնիկական ոլորտներում, Կոդմերի պետությունների դրական իմիջի փոխադարձ ամրապնդում, ընդհանուր մշակութային, կրթական և գիտական տարածքի ամրապնդում:

Համալսարանի խնդիրների իրագործումն իրականացվում է կրթության և գիտության բնագավառում առաջատար տեխնոլոգիաների կիրառման, համաշխարհային լավագույն փորձի օգտագործման միջոցով:

Հոդված 4

Կրթական գործունեությունը

Համալսարանն իրականացնում է կրթական գործունեություն՝ Կոդմերի պետությունների օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրագործման շրջանակներում ուսուցումը Համալսարանում իրականացվում է հայերենով՝ ռուսերենի պարտադիր դասավանդմամբ:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրագործման շրջանակներում ուսուցումը Համալսարանում իրականացվում է ռուսերենով՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ:

Համալսարանի շրջանավարտների՝ հայերենի և ռուսերենի տիրապետման մակարդակը պետք է բավարարի հաղորդակցման պահանջներին և թույլ տա իրականացնել մասնագիտական գործունեություն հայերենով և ռուսերենով՝ մասնագիտություններին, գիտական մասնագիտություններին և պատրաստման ուղղություններին համապատասխան:

Լիազորված մարմինների համաձայնությամբ Համալսարանում կարող են ստեղծվել Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և այլ պետությունների կրթական և (կամ) գիտական կազմակերպությունների ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ Համալսարանի և համապատասխան կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերի հիման վրա:

Ամբողջական ծավալով կրթական ծրագրերը յուրացրած և պետական ամփոփիչ ատեստավորումը հաջողությամբ անցած անձանց տրվում են Կոդմերի պետությունների կրթության և (կամ) որակավորման մասին փաստաթղթեր կամ այլ փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կրթական

ծրագրերի իրականացման շրջանակում կրթական գործունեության լիցենզավորումը և հավատարմագրումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակում կրթական գործունեության լիցենզավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրություններին համապատասխան:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված կրթական ծրագրերի իրականացման շրջանակում կրթական գործունեության պետական հավատարմագրումն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համապատասխան:

Հոդված 5

Համալսարանի կառավարման մարմինները

Կառավարման խորհուրդը Համալսարանի կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմինն է:

Համալսարանի միանձնյա գործադիր մարմինը Համալսարանի ռեկտորն է (այսուհետ՝ Ռեկտոր):

Գիտական խորհուրդը Համալսարանի կոլեգիալ կառավարման մշտապես գործող մարմինն է:

Կանոնադրությամբ կարող է նախատեսվել կառավարման այլ մարմինների ստեղծում՝ յուրաքանչյուր Կողմի պետության օրենսդրության համապատասխան:

Հոդված 6

Կառավարման խորհուրդը

Կառավարման խորհուրդը կազմված է 12 անդամից՝ 4 ներկայացուցիչ յուրաքանչյուր Լիազորված մարմնից և 4 ներկայացուցիչ Համալսարանից՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Համալսարանի ներկայացուցիչները առաջարկվում են Համալսարանի Գիտական խորհրդի կողմից՝ համաձայն Կանոնադրության, և համաձայնեցվում Լիազորված մարմինների կողմից:

Կառավարման խորհրդում ընդգրկված Համալսարանի ներկայացուցիչները Համալսարանում չեն կարող զբաղեցնել ղեկավար պաշտոններ:

Կառավարման խորհրդի կազմը հաստատվում է Լիազորված մարմինների համատեղ հրամանով:

Լիազորված մարմինները դիվանագիտական ուղիներով միմյանց տեղեկացնում են իրենց ներկայացուցիչների թեկնածությունների մասին՝ Կառավարման խորհրդի կազմը ձևավորելու կամ փոփոխություններ կատարելու նպատակով: Համալսարանն իր ներկայացուցիչների թեկնածությունների մասին գրավոր տեղեկացնում է Լիազորված մարմիններին՝ Կառավարման խորհրդի կազմը ձևավորելու կամ փոփոխություններ կատարելու նպատակով:

Կառավարման խորհրդի գործունեությունը ղեկավարում են 2 համանախագահները, որոնք նշանակվում են Լիազորված մարմինների ղեկավարների կողմից՝ Կառավարման խորհրդի անդամ հանդիսացող իրենց ներկայացուցիչների կազմից:

Կառավարման խորհուրդը հաստատում է Համալսարանի կառուցվածքը և բյուջեն, Համալսարանի տարեկան ֆինանսական հաշվետվությունը, Համալսարանի գործունեության տարեկան հաշվետվությունը, Համալսարանի ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև քննարկում է սույն Համաձայնագրի իրագործման հետ կապված այլ հարցեր:

Կառավարման խորհրդի այլ լիազորությունները սահմանվում են Կառավարման խորհրդի կանոնակարգով, որը հաստատում են Լիազորված մարմինները:

Հոդված 7

Գիտական խորհուրդը

Գիտական խորհուրդը ձևավորվում է գիտամանկավարժական անձնակազմի, վարչակազմի ներկայացուցիչներից՝ ի դեմս ի պաշտոնե Համալսարանի ռեկտորի, պրոռեկտորների և ինստիտուտների տնօրենների ու Համալսարանի ուսումնառուների:

Գիտական խորհուրդը զբաղվում է Համալսարանի ակադեմիական գործունեության ընթացիկ և հեռանկարային զարգացման հարցերով և գործում է 5 տարի ժամկետով: Համալսարանի վարչակազմի ներկայացուցիչները չեն կարող կազմել Գիտական խորհրդի ընդհանուր կազմի 30%-ից ավելին:

Գիտական խորհրդի կառուցվածքը, ձևավորման կարգը, լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում են Կանոնադրությամբ:

Հոդված 8

Ռեկտորը

Ռեկտորն իրականացնում է Համալսարանի գործունեության անմիջական ղեկավարումը:

Ռեկտորի պաշտոնի թեկնածուներին ներկայացվող պահանջները, ընտրությունների անցկացման կարգը, ինչպես նաև Ռեկտորի իրավունքները, պարտականությունները և լիազորությունները սահմանվում են Կանոնադրությամբ:

Ռեկտորն ընտրվում է Կառավարման խորհրդի կողմից՝ Կանոնադրությանը համապատասխան, և պաշտոնում հաստատվում է Լիազորված մարմինների համատեղ հրամանով, մինչև 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող զբաղեցնել Ռեկտորի պաշտոնը ավելի քան 2 ժամկետ անընդմեջ:

Մինչև ընտրված Ռեկտորի նշանակումը Լիազորված մարմիններից մեկի անհամաձայնության դեպքում կարող է կիրառվել վետոյի իրավունք, որի արդյունքում Ռեկտորը համարվում է չընտրված:

Ռեկտորի թափուր պաշտոնի առկայության կամ գործող Ռեկտորի լիազորությունների իրականացման անհնարինության դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում հրավիրվում է Կառավարման խորհրդի նիստ՝ Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու համար: Կառավարման խորհրդի որոշմամբ Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվում այն ֆիզիկական անձը, որը համապատասխանում է Կանոնադրությամբ սահմանված՝ Ռեկտորի պաշտոնի թեկնածուներին ներկայացվող պահանջներին:

Եթե Ռեկտորի կողմից իրականացվում է այնպիսի գործունեություն, որն առաջացնում է Համալսարանի խնդիրներին հակասող հետևանքներ, ապա Կառավարման խորհուրդն իրավունք ունի Լիազորված մարմիններին Ռեկտորին անվստահություն հայտնելու հիմնավորված առաջարկություն ներկայացնելու, որի հիման վրա Լիազորված մարմինները համատեղ որոշմամբ իրավունք ունեն Ռեկտորին ազատելու իր զբաղեցրած պաշտոնից:

Ռեկտորը զբաղեցրած պաշտոնից ազատվում է Լիազորված մարմինների համատեղ հրամանով՝ Կողմերից մեկի նախաձեռնությամբ:

Ռեկտորի հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Ռեկտորի և որպես գործատու հանդես եկող ու Համալսարանի հիմնադիրների անունից գործող՝ Հայկական կողմից Լիազորված մարմնի միջև կնքված աշխատանքային պայմանագրով:

Հոդված 9

Ակադեմիական իրավունքները և ազատությունները

Համալսարանում գիտական և մանկավարժական աշխատողներին ու ուսումնառուներին երաշխավորվում են Կողմերի պետությունների օրենսդրությամբ նախատեսված ակադեմիական իրավունքներ ու ազատություններ:

Հոդված 10

Ընդունելության կանոնները

Համալսարան ընդունվելու իրավունքից օգտվում են կրթության համապատասխան մակարդակ ունեցող Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիները, այլ պետությունների քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ անկախ սեռից, տարիքից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, գույքային, սոցիալական և պաշտոնական դիրքից, բնակության վայրից, կրոնի նկատմամբ վերաբերմունքից, համոզմունքներից, հասարակական միավորումներին պատկանելությունից, ինչպես նաև, Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան, այլ հանգամանքներից:

Համալսարան ընդունելության կանոնները սահմանվում են Համալսարանի կողմից՝ Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան:

Հայաստանի Հանրապետության կրթական ծրագրերով ուսուցման համար ընդունելությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության համապատասխան: Ռուսաստանի Դաշնության կրթական ծրագրերով ուսուցման համար ընդունելությունն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության կրթության մասին օրենսդրության համապատասխան:

Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի բյուջետային հատկացումների հաշվին ուսուցման համար ընդունելության տեղերի քանակը յուրաքանչյուր տարի սահմանում է Ռուսական Կողմի Լիազորված մարմինը Համալսարանի հայտի հիման վրա, որը տրվում և քննարկվում է Ռուսական Կողմի Լիազորված մարմնի սահմանած կարգով:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ուսուցումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի բյուջետային հատկացումների հաշվին ուսուցումը կազմակերպվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համապատասխան:

Վճարովի կրթական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրերով Համալսարանն իրավունք ունի կրթական գործունեություն իրականացնելու ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց միջոցների հաշվին:

Հոդված 11
Գիտության և կրթության բնագավառում
միջազգային համագործակցությունը

Հայոց և ուսաց լեզուների տարածման ու Կողմերի պետությունների ընդհանուր մշակութային, կրթական և գիտական տարածքն ընդլայնելու նպատակով Լիազորված մարմինները աջակցում են Համալսարանին Կողմերի պետությունների կրթական և գիտական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման գործում:

Լիազորված մարմինները տեղեկացնում են Համալսարանին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կրթության ու գիտության բնագավառում պետական ծրագրերին նրա մասնակցության հնարավորության մասին՝ նշված ծրագրերի իրագործմանը ուսումնառուներին, գիտական և մանկավարժական աշխատողներին ներգրավելու նպատակով:

Համալսարանի ուսումնառուների, մանկավարժական, գիտական և այլ աշխատողների միջազգային ակադեմիական շարժունակության միջոցով Համալսարանը զարգացնում է հումանիտար կապերը՝ համաշխարհային կրթական տարածքում մրցունակությունը բարձրացնելու համար:

Համալսարանի կողմից համագործակցության մասին համաձայնագրերի կնքումն իրականացվում է Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան:

Հոդված 12
Համալսարանի ենթակառուցվածքը

Շենքերը, շինությունները, կառույցները և անշարժ գույքի այլ օբյեկտները, հողատարածքները, ինչպես նաև շարժական գույքի օբյեկտները, որոնք օգտագործվում են Համալսարանի կողմից և ներկայացվել են Կողմերի կողմից՝ որպես ներդրում Համալսարանի գույքային համալիրում, ներառյալ մինչև սույն Համաձայնագրի կնքումը, կամ ձեռք են բերվել Համալսարանի կողմից ցանկացած աղբյուրի միջոցների հաշվին, նախատեսված են բացառապես սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում սահմանված՝ Համալսարանի խնդիրների կատարումն ապահովելու համար:

Կողմերն իրավունք ունեն մասնակցելու շենքերի վերանորոգման և վերակառուցման ֆինանսավորմանը, ինչպես նաև նոր շենքերի, շինությունների և օբյեկտների կառուցմանն ու ձեռքբերմանը՝ հետագայում դրանք փոխանցելու համար Համալսարանին սեփականության կամ անհատույց օգտագործման

հնարավորությամբ, Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան:

Համալսարանի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հողատարածքները Կողմերի կողմից տրամադրվում են Համալսարանին անհատույց օգտագործման՝ բացառապես սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված՝ Համալսարանի խնդիրների կատարումն ապահովելու համար:

Համալսարանի ենթակառուցվածքի ընդլայնումը դիտարկվում է Կողմերի պետությունների կողմից իրականացվող ռազմավարական ծրագրերի շրջանակում:

Հոդված 13

Համալսարանի գործունեության ֆինանսավորումը

Համալսարանի գործունեության ֆինանսական ապահովումն իրականացվում է Կողմերի կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի միջոցների հաշվին:

Համալսարանի՝ սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածով սահմանված խնդիրների իրականացման համար ֆինանսական ապահովումը հիմնվում է դրա նպատակային ուղղվածության և բազմաթիվ ֆինանսավորման աղբյուրների վրա և իրականացվում է Կողմերի կողմից՝ իրենց ազգային ռազմավարական փաստաթղթերին համապատասխան, հաշվի առնելով իրենց ազգային օրենսդրության դրույթները, ինչպես նաև Համալսարանի կողմից՝ եկամուտ ստեղծող գործունեության և ֆինանսավորման այլ արտաբյուջետային աղբյուրների հաշվին:

Համալսարանը քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա իրավունք ունի կատարելու աշխատանքներ և մատուցելու ծառայություններ, մատուցելու վճարովի կրթական ծառայություններ, եթե դա չի հակասում Համալսարանի խնդիրներին կամ Կանոնադրությամբ նախատեսված նրա գործունեության նպատակներին՝ Կողմերի պետությունների օրենսդրության համապատասխան:

Քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա առաջացող քաղաքացիական իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում է աշխատանքի կատարման, ծառայությունների մատուցման վայրի Կողմի պետության օրենսդրությունը:

Համալսարանը Կառավարման խորհրդի հետ նախապես համաձայնեցնում է օտարերկրյա կամ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերին մասնակցությունը՝ համապատասխան համաձայնագրի հիման վրա:

Հոդված 14
Համալսարանի գնումների գործունեությունը

Համալսարանի գնումների գործունեությունն իրականացվում է ըստ գործունեության վայրի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

Համալսարանի գնումների գործունեության իրականացման սկզբունքների և ընթացակարգի հիմնական պահանջները կարգավորվում են Համալսարանի գնումների մասին Կանոնակարգով:

Հոդված 15
Իրավակարգի պահպանումը

Հայկական կողմը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ Համալսարանի տարածքում անվտանգության ապահովման և իրավակարգի պահպանման համար:

Հոդված 16
Վեճերի և տարաձայնությունների լուծումը

Կողմերի միջև առաջացող՝ սույն Համաձայնագրի դրույթների կիրառման և (կամ) մեկնաբանման հետ կապված վեճերն ու տարաձայնությունները լուծվում են նրանց միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 17
Փոփոխություններ և լրացումներ կատարելը

Կողմերը սույն Համաձայնագրում կարող են կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 18
**Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և
գործողության դադարեցումը**

Սույն Համաձայնագիրը կնքվում է 10 տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի

կողմից կատարված լինելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագրի գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ 10-ամյա ժամանակահատվածների համար, եթե Կողմերից ոչ մեկը դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցման միջոցով չհայտնի դրա գործողությունը դադարեցնելու վերաբերյալ իր մտադրության մասին ոչ ուշ, քան առաջին կամ հաջորդող ժամանակահատվածները լրանալուց 6 ամսից առաջ:

Սույն Համաձայնագրի գործողությունը դադարելու դեպքում Կողմերն ապահովում են Համալսարանի ուսանողների ուսման ավարտը, նշանակում են լուծարքային հանձնաժողով, որը կազմում է Համալսարանի գույքի լուծարքային հաշվեկշիռը: Լուծարքային հաշվեկշիռը ներկայացվում է Լիազորված մարմինների հաստատմանը:


Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից իրենց գործողությունը դադարեցնում են Հիմնադիր համաձայնագրի 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը և 2-13-րդ հոդվածները:

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելով՝ այդ պահին գործող Ռեկտորի լիազորությունները չեն դադարում:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2024 թվականի դեկտեմբերի 20 -ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի տեքստերի միջև տարաձայնությունների դեպքում Կողմերն օգտագործում են ռուսերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝



Ռուսաստանի Դաշնության
կառավարության կողմից՝



СОГЛАШЕНИЕ

между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации об условиях деятельности в Республике Армения Российско-Армянского университета

Правительство Республики Армения и Правительство Российской Федерации, именуемые в дальнейшем Сторонами,

исходя из отношений союзничества и братской дружбы между Арменией и Россией,

руководствуясь Соглашением между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о сотрудничестве в области высшего образования от 11 января 1993 г., Договором о дружбе, сотрудничестве и взаимной помощи между Республикой Армения и Российской Федерацией от 29 августа 1997 г.,

в целях создания наиболее благоприятных условий для дальнейшего взаимодействия в развитии образования и культур народов государств Сторон,

исходя из накопленного опыта реализации Соглашения между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации об условиях учреждения и деятельности в городе Ереване Российско-Армянского университета от 29 августа 1997 г., измененного и дополненного Соглашением между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о внесении изменений и дополнений в Соглашение между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации об условиях учреждения и деятельности в городе Ереване Российско-Армянского университета от 29 августа 1997 г. от 23 апреля 2003 г. (далее - Учредительное соглашение),

признавая необходимость принятия мер по дальнейшему развитию образовательной организации высшего образования «Российско-Армянский университет» (далее - Университет),

согласились о нижеследующем:

Статья 1

Правовое положение

Настоящим Соглашением Стороны закрепляют условия деятельности Университета, созданного Учредительным соглашением.

Университет является межгосударственной образовательной организацией высшего образования, находящейся в совместном ведении Республики Армения и Российской Федерации.

В соответствии с законодательством Республики Армения Университет

является государственным университетом Республики Армения и имеет статус фонда.

В соответствии с законодательством Российской Федерации Университет пользуется статусом федеральной государственной образовательной организации высшего образования в Российской Федерации.

Университет является юридическим лицом.

Университет действует на основании устава Университета (далее - Устав), утверждаемого уполномоченными органами Сторон, указанными в статье 2 настоящего Соглашения (далее - Уполномоченные органы).

Рабочими языками Университета являются армянский и русский.

Делопроизводство в Университете ведется на русском языке, а в рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Республики Армения, - на армянском языке. Армянский язык используется в переписке Университета с государственными ведомствами и организациями Республики Армения.

Статья 2

Уполномоченные органы

Уполномоченными органами являются:

- от Армянской Стороны – Министерство образования, науки, культуры и спорта Республики Армения (далее – Уполномоченный орган от Армянской Стороны);
- от Российской Стороны – Министерство науки и высшего образования Российской Федерации (далее – Уполномоченный орган от Российской Стороны).

Об изменении наименования Уполномоченного органа и (или) о передаче его функций другому органу (другим органам) государственной власти одна Сторона незамедлительно направляет другой Стороне письменное уведомление по дипломатическим каналам.

Статья 3

Задачи Университета

Задачами Университета являются:

- подготовка высококвалифицированных кадров, в том числе научных и научно-педагогических кадров, в соответствии с утвержденными в Республике Армения государственными образовательными стандартами и требованиями и утвержденными в Российской Федерации федеральными государственными образовательными стандартами и федеральными государственными требованиями;

- осуществление образовательной, научной и инновационной деятельности;
- проведение фундаментальных и прикладных научных исследований совместно с образовательными организациями высшего образования и научными организациями Республики Армения, Российской Федерации и других государств;
- реализация научно-технических проектов, в том числе с привлечением в качестве заказчиков представителей бизнес-сообщества;
- поддержка и финансирование науки, развитие уникальных компетенций;
- удовлетворение образовательных потребностей личности, содействие сохранению, развитию и взаимообогащению культур, языков, исторических и национальных традиций народов государств Сторон;
- проведение просветительских мероприятий с целью популяризации русского языка и русской культуры;
- обеспечение расширения взаимодействия с общеобразовательными школами Республики Армения;
- создание и развитие центра повышения квалификации преподавателей русского языка;
- реализация программ академических обменов и стажировок в образовательных организациях высшего образования и научных организациях Республики Армения, Российской Федерации и других государств;
- проведение выставок и ярмарок российского образования;
- усиление роли и влияния Республики Армения и Российской Федерации в мировой гуманитарной и научно-технической сферах, взаимное укрепление положительного имиджа государств Сторон, укрепление общего культурного, образовательного и научного пространства.

Реализация задач Университета достигается посредством применения передовых технологий в области образования и науки, использования лучшего мирового опыта.

Статья 4

Образовательная деятельность

Университет осуществляет образовательную деятельность по образовательным программам в соответствии с требованиями, предусмотренными законодательством государств Сторон.

В рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Республики Армения, обучение в Университете ведется на армянском языке с обязательным преподаванием русского языка.

В рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Российской Федерации, обучение в Университете ведется на русском языке с обязательным преподаванием армянского языка.

Уровень владения выпускниками Университета армянским и русским языками

должен удовлетворять коммуникативные потребности и позволять вести профессиональную деятельность на армянском и русском языках в соответствии со специальностями, научными специальностями и направлениями подготовки.

В Университете могут создаваться кафедры и другие структурные подразделения образовательных и (или) научных организаций Республики Армения, Российской Федерации и других государств по согласованию с Уполномоченными органами на основании соглашений между Университетом и соответствующими организациями.

Лицам, освоившим образовательные программы в полном объеме и успешно прошедшим государственную итоговую аттестацию, выдаются документы об образовании и (или) квалификации или иные документы государств Сторон.

Лицензирование и аккредитация образовательной деятельности в рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Республики Армения, осуществляется в соответствии с законодательством Республики Армения.

Лицензирование образовательной деятельности в рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Российской Федерации, осуществляется в соответствии с законодательством Республики Армения и Российской Федерации.

Государственная аккредитация образовательной деятельности в рамках реализации образовательных программ, предусмотренных законодательством Российской Федерации, осуществляется в соответствии с законодательством Российской Федерации.

Статья 5

Органы управления Университета

Управляющий совет является высшим коллегиальным органом управления Университета.

Единоличным исполнительным органом Университета является ректор Университета (далее - Ректор).

Ученый совет является постоянно действующим органом коллегиального управления Университета.

Уставом может быть предусмотрено создание иных органов управления в соответствии с законодательством каждого из государств Сторон.

Статья 6

Управляющий совет

Управляющий совет состоит из 12 членов: по 4 представителя от каждого Уполномоченного органа, а также 4 представителя от Университета с правом совещательного голоса.

Представители Университета рекомендуются Ученым советом Университета в соответствии с Уставом и согласовываются Уполномоченными органами.

Представители Университета, входящие в состав Управляющего совета, не могут занимать руководящие должности в Университете.

Состав Управляющего совета утверждается совместным приказом Уполномоченных органов.

Уполномоченные органы информируют друг друга по дипломатическим каналам о кандидатурах своих представителей с целью формирования или внесения изменений в состав Управляющего совета. Университет письменно уведомляет Уполномоченные органы о кандидатурах своих представителей с целью формирования или внесения изменений в состав Управляющего совета.

Руководство деятельностью Управляющего совета осуществляют 2 сопредседателя, назначаемые руководителями Уполномоченных органов из числа своих представителей, входящих в состав Управляющего совета.

Управляющий совет утверждает структуру и бюджет Университета, годовой финансовый отчет Университета, годовой отчет о деятельности Университета, стратегическую программу Университета, а также рассматривает иные вопросы, связанные с реализацией настоящего Соглашения.

Иные полномочия Управляющего совета определяются положением об Управляющем совете, утверждаемым Уполномоченными органами.

Статья 7

Ученый совет

Ученый совет формируется из представителей научно-педагогического состава, администрации в лице ректора, проректоров и директоров институтов Университета по должности и обучающихся Университета.

Ученый совет занимается решением вопросов текущего и перспективного развития академической деятельности Университета и действует сроком на 5 лет. Представители администрации Университета не могут составлять более 30% общего состава Ученого совета.

Структура, порядок формирования, полномочия и порядок деятельности Ученого совета определяются Уставом.

Статья 8

Ректор

Ректор осуществляет непосредственное руководство деятельностью Университета.

Требования к кандидатам на должность Ректора, порядок проведения выборов, а также права, обязанности и полномочия Ректора устанавливаются Уставом.

Ректор избирается Управляющим советом в соответствии с Уставом и утверждается в должности совместным приказом Уполномоченных органов на срок до 5 лет. Одно и то же лицо не может замещать должность Ректора более 2 сроков подряд.

В случае несогласия одного из Уполномоченных органов до назначения избранного Ректора может быть применено право вето, в результате которого Ректор считается неизбранным.

При наличии вакантной должности Ректора или в случае невозможности осуществления полномочий действующего Ректора в течение 10 рабочих дней созывается заседание Управляющего совета для назначения исполняющего обязанности Ректора. Решением Управляющего совета исполняющим обязанности Ректора назначается физическое лицо, соответствующее требованиям к кандидатам на должность Ректора, установленным Уставом.

В случае осуществления Ректором деятельности, влекущей последствия, которые противоречат задачам Университета, Управляющий совет вправе представить Уполномоченным органам обоснованное предложение о выражении Ректору недоверия, на основании которого Уполномоченные органы совместным решением вправе освободить Ректора от занимаемой должности.

Освобождение Ректора от занимаемой должности осуществляется совместным приказом Уполномоченных органов по инициативе одной из Сторон.

Трудовые отношения с Ректором регулируются трудовым договором, заключаемым между Ректором и Уполномоченным органом от Армянской стороны, выступающим в качестве работодателя и действующим от имени Учредителей Университета.

Статья 9

Академические права и свободы

Научным и педагогическим работникам и обучающимся в Университете гарантируются академические права и свободы, предусмотренные законодательством государств Сторон.

Статья 10

Правила приема

Правом поступления в Университет пользуются граждане Республики Армения, Российской Федерации, граждане других государств и лица без гражданства, имеющие образование соответствующего уровня, независимо от пола, возраста, расы, национальности, языка, происхождения, имущественного, социального и должностного положения, места жительства, отношения к религии, убеждений, принадлежности к общественным объединениям, а также других обстоятельств в соответствии с законодательством государств Сторон.

Правила приема устанавливаются Университетом в соответствии с законодательством государств Сторон.

Прием на обучение по образовательным программам Республики Армения проводится в соответствии с законодательством об образовании Республики Армения. Прием на обучение по образовательным программам Российской Федерации проводится в соответствии с законодательством об образовании Российской Федерации.

Количество мест для приема на обучение за счет бюджетных ассигнований федерального бюджета Российской Федерации определяется ежегодно Уполномоченным органом от Российской Стороны по заявке Университета, подаваемой и рассматриваемой в порядке, установленном Уполномоченным органом от Российской Стороны.

Обучение за счет средств государственного бюджета Республики Армения организуется в соответствии с законодательством Республики Армения.

Обучение за счет бюджетных ассигнований федерального бюджета Российской Федерации организуется в соответствии с законодательством Российской Федерации.

Университет вправе осуществлять образовательную деятельность за счет средств физических и (или) юридических лиц по договорам об оказании платных образовательных услуг.

Статья 11

Международное сотрудничество в сферах науки и образования

В целях распространения армянского и русского языков и содействия расширению общего культурного, образовательного и научного пространства государств Сторон Уполномоченные органы содействуют Университету в развитии сотрудничества с образовательными и научными организациями государств Сторон.

Уполномоченные органы информируют Университет о возможности его участия в государственных программах в сфере образования и науки Республики Армения и Российской Федерации в целях привлечения обучающихся, научных и педагогических работников Университета к реализации указанных программ.

Университет развивает гуманитарные связи посредством международной академической мобильности обучающихся, педагогических, научных и иных работников Университета для повышения конкурентоспособности в мировом образовательном пространстве.

Заключение Университетом соглашений о сотрудничестве осуществляется в соответствии с законодательством государств Сторон.

Статья 12

Инфраструктура Университета

Здания, строения, сооружения и другие объекты недвижимости, земельные участки, а также объекты движимого имущества, используемые Университетом и внесенные Сторонами в качестве вклада, в том числе до момента заключения настоящего Соглашения, в имущественный комплекс Университета либо приобретенные Университетом за счет средств любых источников предназначены исключительно для обеспечения выполнения задач Университета, определенных в Статье 3 настоящего Соглашения.

Стороны вправе участвовать в финансировании ремонта и реконструкций зданий, а также в строительстве и приобретении новых зданий, сооружений и объектов с возможностью их дальнейшей передачи Университету в собственность или в безвозмездное пользование в соответствии с законодательством государств Сторон.

Стороны предоставляют Университету в безвозмездное пользование земельные участки, необходимые для осуществления Университетом деятельности, предусмотренной настоящим Соглашением, исключительно для обеспечения выполнения задач Университета, указанных в статье 3 настоящего Соглашения.

Расширение инфраструктуры Университета рассматривается в рамках реализуемых стратегических программ государств Сторон.

Статья 13

Финансирование деятельности Университета

Финансовое обеспечение деятельности Университета осуществляется Сторонами за счет средств государственного бюджета Республики Армения и федерального бюджета Российской Федерации.

Финансовое обеспечение реализации задач Университета, указанных в статье 3 настоящего Соглашения, основывается на его целевой ориентации и множественности источников финансирования и осуществляется Сторонами в соответствии с их национальными стратегическими документами с учетом положений их национального законодательства, а также Университетом за счет средств от приносящей доход деятельности и иных внебюджетных источников финансирования.

Университет вправе выполнять работы и оказывать услуги на основе гражданско-правовых договоров, оказывать платные образовательные услуги, если это не противоречит задачам Университета или целям его деятельности, предусмотренным Уставом, в соответствии с законодательством государств Сторон.

К гражданским правоотношениям, возникающим на основе гражданско-

правовых договоров, применяется законодательство государства Стороны места выполнения работы, оказания услуг.

Университет предварительно согласовывает с Управляющим советом участие в проектах, финансируемых за счет средств иностранных или международных неправительственных организаций, на основании соответствующего соглашения.

Статья 14

Закупочная деятельность Университета

Закупочная деятельность Университета осуществляется по месту деятельности в соответствии с законодательством Республики Армения.

Основные требования к принципам и порядку осуществления закупочной деятельности Университета регламентируются Положением о закупках Университета.

Статья 15

Поддержание правопорядка

Армянская Сторона принимает соответствующие меры для обеспечения безопасности и поддержания правопорядка на территории Университета.

Статья 16

Разрешение споров и разногласий

Споры и разногласия между Сторонами, связанные с применением и (или) толкованием положений настоящего Соглашения, разрешаются путем консультаций и переговоров между ними.

Статья 17

Внесение изменений и дополнений

Стороны могут вносить в настоящее Соглашение изменения и дополнения, которые оформляются отдельными протоколами и являются неотъемлемой частью настоящего Соглашения.

Статья 18

Вступление в силу и прекращение действия настоящего Соглашения

Настоящее Соглашение заключается сроком на 10 лет и вступает в силу с даты получения по дипломатическим каналам последнего письменного уведомления о выполнении Сторонами внутригосударственных процедур, необходимых для его

вступления в силу.

Действие настоящего Соглашения автоматически продлевается на последующие 10-летние периоды, если ни одна из Сторон не заявит путем письменного уведомления по дипломатическим каналам о своем намерении прекратить его действие не позднее, чем за 6 месяцев до истечения срока первого или последующих периодов.

В случае прекращения действия настоящего Соглашения Стороны обеспечивают завершение обучения студентов Университета, назначают ликвидационную комиссию, которая составляет ликвидационный баланс имущества Университета. Ликвидационный баланс представляется на утверждение Уполномоченным органам.

С даты вступления в силу настоящего Соглашения прекращают свое действие абзац второй статьи 1 и статьи 2 - 13 Учредительного соглашения.

Со вступлением в силу настоящего Соглашения полномочия действующего на тот момент Ректора не прекращаются.

Совершено в г. Москва «20» декабря 2024 г. в двух экземплярах, каждый на армянском и русском языках, причем оба текста имеют одинаковую силу.

В случае расхождений между текстами настоящего Соглашения Стороны используют текст на русском языке.

**За Правительство
Республики Армения**




**За Правительство
Российской Федерации**



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024թ. դեկտեմբերի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուս-Հայկական համալսարանի գործունեության պայմանների մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ**




Նելլի Սարգսյան